

Ինչ անել, եթե աշխատավայրում ինչ-որ մեկը ունի COVID-19

Եթե աշխատավայրում ինչ-որ մեկը ունի COVID-19, կամ հնարավոր է, որ ունի, դուք պետք է անհապաղ հետևեք ստորև նշված քայլերին: Մի սպասեք մինչև հաստատվի, որ նրանք COVID-19 ունեն:

Այս տեղեկատվությունը ձեզ աշխատավայրում օգնելու համար է: Սակայն դուք պետք է միշտ հետևեք ձեր նահանգի կամ տարածքի առողջապահության նախարարության՝ [state or territory public health department](#) խորհրդին:

Եթե անձը ունի լուրջ ախտանիշներ, ինչպես օրինակ՝ շնչառական դժվարություն, գանգահեք 000:

1. Մեկուսացրեք անձին

Մեկուսացրեք անձին մյուսներից: Դուք նաև պետք է տրամադրեք նրանց և ցանկացածին, որ օգնում է նրանց, համապատասխան անձնական պաշտպանիչ սարքավորումներ, ինչպիսիք են՝ մեկանգամյա օգտագործման վիրահատական դիմակը և ձեռքի սանիտարական միջոցը:

2. Դիմեք խորհրդատվության և գնահատեք վտանգները

Դիմեք կառավարության առողջապահության խորհրդատվության ձեր նահանգի կամ տարածքի օգնության ծառայությունից՝ [state or territory helpline](#) կամ Ազգային օգնության կորոնավիրուսի վերաբերյալ ծառայությունից (1800 020 080):

Համոզվեք, որ ունեք անձի կապի տվյալները: Նշում կատարեք այն վայրերի վերաբերյալ, որտեղ նրանք եղել են աշխատավայրում, ում հետ են սերտ շփման մեջ եղել, և ինչքան ժամանակ, որպեսզի տեղեկացվեք մյուսների նկատմամբ վտանգների կամ վայրերի մաքրման և ախտահանման վերաբերյալ:

Հնարավոր է կարիք լինի տեղեկացնել ձեր նահանգի կամ տարածքի աշխատանքի առողջության և անվտանգության կարգավորողին՝ [state or territory work health and safety regulator](#):

3. Փոխադրամիջոց

Համոզվեք, որ անձը ունի փոխադրամիջոց տուն գնալու, որևէ տեղ մեկուսանալու կամ բժշկական հաստատություն գնալու համար, եթե անհրաժեշտ է: Հնարավորության դեպքում նրանք պետք է օգտագործեն անձնական փոխադրամիջոց՝ նվազեցնելու ուրիշներին վտանգի ենթարկելը:

4. Մաքրեք և ախտահանեք

Փակեք այն տարածքները, որը անձը օգտագործել է՝ մինչև դրանք մաքրվեն և ախտահանվեն: Հնարավորության դեպքում բացեք դրսի դռները և պատուհանները՝ օդի հոսքը ավելացնելու համար:

Մանրակրկիտ մաքրեք և ախտահանեք տարածքները և այն սարքավորումները, որոնք անձը օգտագործել է, օրինակ՝ գրասենյակները, գուգարանները, խոհանոցները և ընդհանուր տարածքները:

Մաքրողները պետք է կրեն համապատասխան անձնական պաշտպանիչ սարքավորումներ, օրինակ՝ ձեռնոցներ, անվտանգության ակնոցներ և մեկանգամյա օգտագործման զոզնոց:

5. Հայտնաբերեք և տեղեկացրեք սերտ կապերի մասին

Նահանգային կամ տարածքային հանրային առողջապահական բաժինը կհայտնաբերի հաստատված COVID-19-ի դեպքի հետ սերտ շփման մեջ եղած անձանց և կտեղեկացնի նրանց, թե ինչ պետք է նրանք անեն:

Տեղեկացեք, թե անձը ում հետ է սերտ շփման մեջ եղել աշխատավայրում և ինչքան ժամանակ, և որտեղ են եղել վարակված անձի հետ սերտ կապի մեջ եղած անձինք աշխատավայրում:

Սա ձեզ կտեղեկացնի մյուսների հնարավոր վտանգների մասին և լրացուցիչ տարածքների մասին, որ անհրաժեշտ է մաքրել և ախտահանել:

6. Վերանայեք վտանգի կառավարման հսկողությունները

Վերանայեք ձեր վտանգի կառավարման հսկողությունները՝ խորհրդակցելով ձեր աշխատողների հետ և գնահատելով, արդյոք փոփոխություններ անհրաժեշտ են:

Քայլեր ձեռնարկել, երբ անձը, որի նկատմամբ մտահոգություն ունեք, վերջերս ձեր աշխատավայրում է եղել

Անձը, ով վերջերս ձեր աշխատավայրում է եղել, ինչպես օրինակ՝ աշխատողը կամ հաճախորդը, կարող է ձեզ տեղեկացնել, որ իրենք ունեն COVID-19: Հաշվի առեք, թե վերջերս երբ են եղել ձեր աշխատավայրում և արդյոք նրանք ուրիշների հետ սերտ շփման մեջ են եղել:

Նույնիսկ եթե նրանք ներկայումս ձեր աշխատավայրում չեն, ամեն դեպքում հարկ կլինի հետևել վերը նշված քայլերին: Դիմեք խորհրդատվության ձեր նահագի կամ տարածքի օգնության ծառայությունից՝ [state or territory helpline](#):

Արդյո՞ք պետք է փակեմ իմ աշխատավայրը

COVID-19-ի կասկածելի կամ հաստատված դեպքից հետո փակվելու ոչ մի ինքնաբերական պահանջ չկա: Հնարավոր է, որ դա անհրաժեշտ չլինի, եթե անձը միայն այցելել է ձեր աշխատավայրի որոշ բաժիններ կամ, եթե առողջապահության պատասխանատուները ձեզ խորհուրդ տան, որ ուրիշների վտանգի ենթարկվելու հավանականությունը ցածր է:

Ձեր աշխատավայրը փակելու անհրաժեշտությունը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ չափը, աշխատանքի բնույթը, մարդկանց թիվը և աղտոտված տարածքները:

Ե՞րբ կարող են աշխատողները վերադառնալ աշխատանքի ապաքինումից կամ մեկուսացումից հետո

Աշխատողները, ովքեր մեկուսացել էին COVID-19-ի թեստի դրական արդյունքից հետո, կարող են վերադառնալ աշխատանքի, միայն երբ ամբողջովին ապաքինվեն կամ թույլատրվի առողջապահության պատասխանատուների կողմից:



Այն աշխատողները, ովքեր ախտանիշներ չեն դրսևորել մեկուսացման ընթացքում, կարող են վերադառնալ աշխատանքի, երբ 14 օրյա ժամկետը լրանա: Նրանք բժշկական թույլտվության կարիք չունեն աշխատանքի վերադառնալու համար:

Լրացուցիչ տեղեկություններ

Լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք՝ Անվտանգ աշխատանք Ավստրալիա կայքը՝ [Safe Work Australia website](https://www.swa.gov.au/coronavirus).